«Գնում ենք Black Eyed Peas-ի համերգին» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Վիճակահանություն) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Բանկ) կողմից:
2. Վիճակահանության ներքոգրյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում Վիճակահանության մասնակիցը հնարավորություն է ստանում հաղթելու Black Eyed Peas խմբի համերգի մասնակցության 41.000 դրամ արժողությամբ 2 տոմս:
3. Վիճակահանությանը մասնակցելու հնարավորություն կստանան այն անձինք, որոնք 2024թ. հունիսի 20-ին՝ Երևանի ժամանակով ժամը 17:00-ից սկսած մինչև 2024թ. հունիսի 25-ը՝ Երևանի ժամանակով ժամը 23:59-ը ներառյալ.
    - կհետևեն «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ֆեյսբուքի պաշտոնական էջին՝ https://www.facebook.com/Ameriabank,
    - այս հրապարակման տակ մեկնաբանություն կթողնեն՝ նշելով (tag) ֆեյսբուքյան իրենց ընկերներոջը:
4. Վիճակահանության մասնակցությունն անվճար է:
5. Վիճակահանության արդյունքների ամփոփումը տեղի կունենա ս.թ. հունիսի 26-ից մինչև հունիսի 27-ն ընկած ժամանակահատվածում Ամերիաբանկի ֆեյսբուքյան էջի Վիճակահանության մասին հրապարակման մեկնաբանության բաժնում՝ էկրանի տեսագրության (screen recording) միջոցով:
6. Վիճակահանության հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ում անունը պատահականության սկզբունքով՝ Comment picker գործիքի միջոցով կընտրվի Վիճակահանության ամփոփման ընթացքում:
7. Հաղթող մասնակցի հետ Բանկը լրացուցիչ կապ կհաստատի՝ նշելով մրցանակի ստացման եղանակը և վայրը:

8. Մրցանակը ստանալու համար հաղթողը պետք է անձամբ մոտենա Բանկի կողմից նշված վայր՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Գովազդային վիճակախաղի կազմակերպիչ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2
Հեռ.՝ 010 561111